ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

2006 թ. հոկտեմբերի 14-ը Կալինինգրադի հայ համայնքի տարեգրության մեջ հատկանշվեց իբրև պատմական բացառիկ օր, քանզի կատարվեց երկար սպասված Ս. Ստեփաննոս եկեղեցու հանդիսավոր օծումը: Նախորդ օրը, հոկտեմբերի 13-ին, Մոսկվայից Կալինինգրադ ժամանեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Տ. Թադեոս քհն. Տերտերյանը: Երեկոյան նավակատիքի արարողությունից անմիջապես հետո, ձեռամբ Սրբազան Հոր, կատարվեց եկեղեցու գմբեթի և զանգակատան խաչերի օծման հանդիսավոր արարողությունը:

Հոկտեմբերի 14-ին, առավոտյան ժամը 9.00-ին, տեղի ունեցավ Կալինինգրադի հայ համայնքի կողմից Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկ-Կալինինգրադի թեմին նվիրաբերված հայկական խաչքարի օծման արարողությունը, որը տեղադրվել է Կալինինգրադի կենտրոնական նորակառույց Ամենափրկիչ առաջնորդանիստ եկեղեցու շրջափակում, բակի հյուսիսային կողմում, և իր վրա կրում է՝ *«Կալինինգրադի հայ համայնքի կողմից. նվիրվում է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկ - Կալինինգրադյան թեմին՝ ի պատիվ 2006 թ. սեպտեմբեր 10-ին Ամենափրկիչ տաճարի օծման և երկու ժողովուրդների հոգևոր բարեկամության»* արձանագրությունը: Խաչքարի հանդիսավոր օծման արարողությունը կատարվեց ձեռամբ Եզրաս եպս. Ներսիսյանի և առընթերակայությամբ Սմոլենսկ–Կալինինգրադի թեմի առաջնորդ Մերաֆիմ եպիսկոպոսի: Արարողությանը իրենց ներկայությունը բերեցին բազմաթիվ հայ և ռուս հավատացյալներ:

Ժամը 11.00-ին սկսվեց Ս. Ստեփաննոս եկեղեցու անդրանիկ Ս. Պատարագը, որի ընթացում տեղի ունեցավ եկեղեցու օծման սրբազան արարողությունը: Պատարագիչ Սրբազան Հայրն իր շնորհավորանքի խոսքն ուղղեց բոլոր ներկաներին և հորդորեց համախմբվել Սուրբ Եկեղեցու շուրջ և հավատքով ու գործով շարունակել անմնացորդ սիրով ու նվիրվածությամբ ծառայել հայ ժողովրդին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Սուրբ Պատարագից հետո Սրբազան Հայրը կարդաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ ուղղված եկեղեցու հիմնական բարերար, տարածաշրջանի Հայ Ազգա-մշակութային ինքնավարության հոգաբարձուների խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Յուրի Քաջոյանին՝ Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին (տե՛ս էջ 17):

Եկեղեցու օծման արարողությանը ներկա էին Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներ, մարզային և քաղաքային դումաների պատգամավորներ, մարզային կառավարության նախարարներ, Եվրոպական Երկրների՝ Կալինինգրադում հավա-

տարմագրված հյուպատոսներ, տարբեր ազգային միությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Սանկտ Պետերբուրգում ՀՀ հյուպատոս Ռուբեն Հակոբյանը, Ռուսաստանի Հայերի Միության փոխնախագահ Գերման Անանյանցը և բազմաթիվ հավատացյալ հայորդիք:

ՕԾՎԵՑԻՆ ԱԼԹԱՅԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԲԱՌՆԱՈՒԼ ՔԱՂԱՔԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

Ալթայի երկրամասի Բառնաուլ քաղաքում նոյեմբերի 12-ին, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի ձեռամբ և առընթերակայությամբ Տ. Մաշտոց քհն. Հակոբյանի, օծվեցին Բառնաուլ քաղաքի Ս. Հռիփսիմե նորակառույց եկեղեցու գմբեթների խաչերը: Օրհնվեց և օծվեց նաև Հայաստանից բերված կարմրատուֆ խաչքարը, որի նվիրատուն է տիար Արամայիս Մարտիրոսյանը: Խաչքարը կանգնեցված է եկեղեցու շրջափակում՝ ի նշանավորումն ռուս և հայ ժողովուրդների բազմադարյա եղբայրության:

Հանդիսավոր այս արարողությանն իրենց ներկայությունն էին բերել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ալթայի երկրամասի թեմի առաջնորդ Մաքսիմ եպիսկոպոսը, Բառնաուլի շրջանային դումայի նախագահ Ս. Կրասնովը, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև բազմաթիվ հայորդիք, ովքեր բնակություն են հաստատել Ալթայի երկրամասում, մասնավորապես Բառնաուլ քաղաքում:

Սրբազան արարողության ավարտին Գերաշնորհ Սրբազան Հայրն իր օրհնության ու բարեմաղթանքի խոսքն ուղղեց հավաքված ժողովրդին՝ կոչ անելով, որ հեռավոր այս երկրամասում կայք հաստատած մեր ժողովրդի զավակունք հավատարիմ մնան ազգային – հոգևոր այն արժեքներին, որ ժառանգել ենք մեր սուրբ նախնյաց կողմից, որով որպես ազգ և ժողովուրդ արդեն 1700 և ավելի տարիներ ապրում և արարում է մեր ժողովուրդը՝ ապավինած փրկարար Խաչին:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ԴՊՐՈՑԸ ՍԿՍԵՑ 2006 Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սույն թվականի հոկտեմբերի 1-ին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Մոսկվայի հայոց եկեղեցու կրթական կենտրոնի 2006 թ. ուսումնական տարվա բացման արարողությունը: Տարեմուտի սկիզբն ազդարարող այս հավաքը, իր տեսակի մեջ լինելով առաջինը, կազմակերպվել էր նորակազմ դպրոցի տնօրենության ու աշակերտական կազմի ջանքերով:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում դպրոցում սովորելու ցանկություն էին հայտնել ավելի քան 150 աշակերտներ, որոնց թիվը գնալով օրեցօր ավելանում է: Կրթական կենտրոնը հնարավորություն է տալիս աշակերտներին հաճախելու մայ-